ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 հուլիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

100
(3309)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ՝ ԱՌԱՆՑ ՎԱՐՉԱՊԵՏԻ

«Ժողովուրդ» օրաթերթն արդեն տեղեկացրել էր, որ օգոստոսի 2-ին՝ ժամը 10:00-ին, կգումարվի Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 9-րդ գումարման առաջին նիստը:

Մինչեւ Ազգային Ժողովի նախագահի ընտրությունը, ԱԺ անդրանիկ նիստը կվարի խորհրդարանի ամենատարեց պատգամավոր Կնյազ Հասանովը, ինչպես պահանջում են Սահմանադրությունն ու «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը:

Առաջին նիստի ամենակարեւոր կազմակերպչական հարցերից մեկը լինելու է Հաշվիչ հանձնաժողովի ձեւավորումը: Հանձնաժողովը կընտրվի խմբակցությունների առաջարկով, պատգամավորների քվեարկությամբ, իսկ դրա կազմում ներկայացված կլինեն ինչպես իշխանությունը, այնպես էլ ընդդիմությունը՝ խորհրդարանում խմբակցությունների համամասնությանը համապատասխան: Հենց այս մարմինն է հետագայում կազմակերպելու եւ ամփոփելու Ազգային Ժողովում անցկացվող գաղտնի ու բաց քվեարկությունների արդյունքները: Նրա լիազորությունները պահպանվում են խորհրդարանի ամբողջ գումարման ընթացքում:

Դրանից հետո պատգամավորները կանցնեն քաղաքական ամենակարեւոր ընտրություններին՝ կընտրեն Ազգային Ժողովի նախագահին, ապա՝ ԱԺ փոխնախագահներին, որոնցից մեկը պետք է լինի ընդդիմադիր պատգամավոր: Քվեարկությունների արդյունքները կհաշվարկի արդեն ընտրված Հաշվիչ հանձնաժողովը:

Օգոստոսի 2-ի նիստում կընտրվեն նաեւ մշտական հանձնաժողովների նախագահները: Հանձնաժողովների ղեկավար պաշտոնների բաշխումն իրականացվում է խորհրդարանական ուժերի միջեւ Դ'Օնդթի (D'Hondt) բանաձեւով, ինչի արդյունքում յուրաքանչյուր խմբակցություն ստանում է իրեն հասանելիք հանձնաժողովների ղեկավարումը՝ ըստ մանդատների քանակի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

2026 թվականի աշնանը Կոտայքի մարզը կդառնա տեղական ինքնակառավարման ընտրությունների գլխավոր քաղաքական թատերաբեմերից մեկը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցով՝ հոկտեմբերի 25-ին ընտրություններ կանցկացվեն Գառնի, Ծաղկաձոր եւ Հրազդան համայնքներում, իսկ նոյեմբերի 29-ին՝ Աբովյան, Նաիրի, Նոր Հաճն եւ Ծաղկաձոր համայնքներում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն արդեն սկսել է թեկնածուների ընտրության եւ համաձայնեցման գործընթացը, սակայն մի շարք համայնքներում վերջնական որոշումներ դեռեւս չկան: Մասնավորապես, Գառնի համայնքում, որտեղ գործող համայնքապետը Տիգրան Պետրոսյանն է, ՔՊ-ում ակտիվորեն քննարկվում է այլ թեկնածու առաջադրելու տարբերակը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունում քննարկվում է Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանի թեկնածությունը: Վերջինս պատգամավորի մանդատ է ստացել Ազգային Ժողովում, եւ եթե պաշտոնապես ստանձնի պատգամավորի լիազորությունները, կուսակցության ներսում քննարկվում է նրան Գառնիի համայնքապետի թեկնածու առաջադրելու սցենարը: Հրազդանում ՔՊ-ն, ըստ մեր տեղեկությունների, գրեթե վերջնական որոշում ունի. իշխանության թեկնածուն լինելու է Սեւակ Միքայելյանը՝ ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանի որդին:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Ֆրանսիայի Հանրապետության Ազգային տոնի առթիվ հուլիսի 14-ին կազմակերպված պաշտոնական ընդունելությունից հետո արձանագրված զանգվածային հիվանդացության դեպքի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ առողջապահության նախարարությունը նոր մանրամասներ է հայտնել: Պաշտոնական պատասխանից պարզ է դառնում, որ խոսքը ոչ թե սննդային թունավորման, այլ նախնական ախտորոշմամբ «Սուր գաստրոէնտերիտ» կամ «Սուր աղիքային վարակ» դեպքերի մասին է, իսկ լաբորատոր հետազոտությամբ հիվանդներից 7-ի մոտ հայտնաբերվել է Salmonella spp.: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր ՀՀ առողջապահության նախարարությանը՝ պարզելու, թե քանի մարդ է տուժել, ինչ ախտանշաններ են արձանագրվել, ինչ հետազոտություններ են իրականացվել, եւ ինչ փուլում է գտնվում քննությունը: Նախարարությունը, ի պատասխան մեր հարցման, նախ հստակեցնում է, որ «Բուժհաստատություններից ստացվել է ոչ թե սննդային թունավորման, այլ «Սուր գաստրոէնտերիտ» կամ «Սուր աղիքային վարակ» նախնական ախտորոշումներով 12 շտապ հաղորդում»: Նախարարության փոխանցմամբ՝ հիվանդների մոտ արձանագրվել են աղիքային վարակի բնորոշ ախտանշաններ. «Բուժառուների մոտ արձանագրվել են լուծ, փսխում, մարմնի ջերմաստիճանի բարձրացում, ջրազրկում, ուշագնացություն, մկանային ցավ, ընդհանուր թուլություն»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ի տեղեկություններով՝ նախօրեին Ծաղկաձորի ճոպանուղու աշխատանքը խափանվել է էլեկտրամատակարարման դադարեցման հետեւանքով, ինչի պատճառով տասնյակ քաղաքացիներ հայտնվել են անհարմար եւ վտանգավոր իրավիճակում: ArmLur.am-ին ահազանգած քաղաքացիները պատմել են, որ հոսանքի անջատման պահին ճոպանուղու մի մասը կանգ է առել, ինչի հետեւանքով մարդիկ մնացել են օդում կախված նստատեղերում, մյուսները՝ սարի տարբեր հատվածներում՝ չկարողանալով շարունակել վերելքը կամ իջնել ներքեւ: Ահազանգած քաղաքացիների փոխանցմամբ՝ ստեղծված իրավիճակը խուճապի է մատնել հատկապես երեխաների հետ հանգստի մեկնած ընտանիքներին: Նրանց խոսքով՝ որոշ ժամանակ ճոպանուղին ամբողջությամբ չէր գործում, իսկ տեղում աշխատակիցները շտապում էին խնդիրը որպե առաջ կարգավորել: Վերեւում սրճարանն էլ չէր աշխատում: Տուրիստական Ծաղկաձորում, որքան հնարավոր է, անհարմարություններ պատճառեցին զբոսաշրջիկներին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՌԱՔՆԱՅԻՆԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐՆ ԵՆ»

Տարածաշրջանային անվտանգության առնչվող այլ հարցերի շուրջ ArmLur.am-ը զրուցել է կրոնագետ, փիլիսոփա Վարդան Խաչատրյանի հետ: *(Սկիզբը՝ նախորդ համարում)*

- Որո՞նք են Իսրայելի հիմնական շահերը Իրանի հարցում:

- Իսրայելում կան շրջանակներ, որոնք կարծում են, որ Իրանը պետք է թուլացվի՝ մինչեւ անգամ բաժանվի մի քանի հատվածների: Այդ սցենարներում խոսվում է Իրանի տարածքում նոր կազմավորումների ստեղծման մասին՝ Քրդստան, Բելուջիստան եւ այլ ինքնավար միավորներ: Միաժամանակ, Իրանը մեղադրում է Իսրայելին իր միջուկային ծրագրի դեմ իրականացված գործողությունների մեջ՝ նշելով, որ սպանվել են միջուկային ոլորտի մասնագետներ եւ վնասվել են քաղաքացիական օբյեկտներ:

- Կարո՞ղ ենք այս հակամարտությունը դիտարկել նաեւ որպես կրոնական բախում:

- Ես չէի գնահատի այն որպես կրոնական հակամարտություն: Այստեղ առաջնայինը աշխարհաքաղաքական եւ ռազմավարական շահերն են: Կրոնական բաղադրիչներ, իհարկե, կան, սակայն դրանք որոշիչ չեն: Վերջերս Վատիկանում կայացած կարդինալների համաժողովում շեշտվեց համամարդկային արժեքների պահպանման կարեւորությունը: Հռոմի պապը նույնպես իր աջակցությունն արտահայտեց այն գաղափարին, որ միջազգային հարաբերություններում պետք է պահպանվեն բարոյական սկզբունքները, այդ թվում՝ «ոսկե կանոնը»՝ դիմացինի հետ վարվել այնպես, ինչպես կցանկանայիր, որ վարվեին քեզ հետ: Եթե միջազգային հարաբերություններում այդ սկզբունքները դուրս մղվեն, աշխարհը կարող է հայտնվել քաոսի մեջ, որտեղ ուժն ու գերակայությունը կփոխարինեն իրավունքի եւ արդարության սկզբունքներին:

- Այս իրողություններն ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ Հայաստանի վրա:

- Հայաստանի համար ամենամեծ վտանգը տարածաշրջանում լայնածավալ պատերազմի հավանականությունն է: Եթե Միացյալ Նահանգները փորձի համախմբել իր գործընկերներին Իրանի դեմ գործողություններում, ապա առանցքային դեր կարող են ստանձնել Թուրքիան եւ Ադրբեջանը: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է եւ սերտ համագործակցում է ԱՄՆ-ի հետ: Ադրբեջանն էլ տարիներ շարունակ զինվել է եւ իր բանակը զարգացրել ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան:

Եթե տարածաշրջանում միաժամանակ ակտիվանան մի քանի ուղղություններ՝ Իրանի ներսում, նրա սահմաններին եւ հարեւան երկրներում, ապա դա Իրանի համար կարող է լրջագույն մարտահրավեր դառնալ:

- Որոշ վերլուծաբաններ նշում են, որ Ադրբեջանի կողմից կուտակված սպառազինությունը կարող է օգտագործվել Իրանի դեմ: Համաձա՞յն եք այդ գնահատականի հետ:

- Ադրբեջանը վերջին տարիներին միլիարդավոր դոլարների սպառազինություն է ձեռք բերել: Տարբեր վերլուծություններում նշվում է, որ այդ զինուժը կարող է օգտագործվել նաեւ Իրանի հյուսիսային ուղղությամբ հնարավոր գործողությունների դեպքում: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ Իրանը նույնպես ունի մեծաթիվ եւ պատրաստված բանակ, ուստի ցանկացած նման զարգացում չափազանց բարդ եւ ծանր հետեւանքներ կարող է ունենալ բոլոր կողմերի համար:

- Վերջերս տեղեկություններ տարածվեցին, որ Իսրայելի կառավարությունը քննարկում է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Ինչպե՞ս եք գնահատում այդ գործընթացը:

- Եթե նման նախաձեռնությունը կյանքի կոչվի, այն առաջին հերթին քաղաքական ուղերձ կլինի Թուրքիային: Սակայն Իսրայելի ներսում այս հարցի շուրջ տարբեր տեսակետներ կան, եւ դեռ վաղ է ասել, թե ինչ վերջնական որոշում կընդունվի խորհրդարանում:

- Անդրադառնանք նաեւ ռուս-ուկրաինական պատերազմին: Ռուսաստանը կորցրե՞լ է գերտերության կարգավիճակը:

- Չեմ կարծում, որ Ռուսաստանը կորցրել է իր գերտերության կարգավիճակը: Պատերազմի սկզբում շատերը սպասում էին արագ հաղթանակի, սակայն Ուկրաինան երկար տարիներ պատրաստվել էր այդ բախմանը՝ արեւմտյան երկրների աջակցությամբ: Միաժամանակ Ռուսաստանը կարողացավ վերակազմակերպել իր տնտեսությունն ու ռազմական համակարգը: Այդ գործընթացում կարեւոր դեր ունեցան կառավարման փոփոխությունները եւ տնտեսական քաղաքականության վերանայումը: Այսօր աշխարհում ձեւավորվում է բազմաբեւեռ համակարգ, որտեղ առանցքային դերակատարներ են ոչ միայն ԱՄՆ-ն, այլեւ Չինաստանը, Ռուսաստանը եւ մի շարք այլ պետություններ: Չինաստանն առանձնանում է իր տնտեսական հզորությամբ, տեխնոլոգիական զարգացմամբ եւ աշխատուժի կազմակերպման մշակույթով, ինչը նրան դարձնում է համաշխարհային քաղաքականության կարեւոր դերակատար:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱԱԾ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻՑ

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը «Կենտրոն» ՔԿՀ-ից ուղերձ է հղել.

«Վերջին շրջանի իմ հանրային գործունեության հիմնական ուղերձներից են եղել ներքին համերաշխությունը, տնտեսությունը «ռուսամետի» ու «արեւմտամետի» բաժանելու անթույլատրելիությունը, վերկուսակցական համագործակցության անհրաժեշտությունը, քանի որ որեւէ քաղաքական ուժ միայնակ չի կարող նման բարդ իրավիճակում Հայաստանի համար լավագույն լուծումները գտնել:

Անկախ բոլոր անարդարություններից, որոնք կատարվել են իմ եւ իմ թիմի նկատմամբ, ես այսօր պնդում եմ նույնը: Ներքին համերաշխությունն այլընտրանք չունի: Դա թշնամու երազանքն է: Ես վստահ եմ, որ առաջիկայում այս գիտակցումը կգերիշխի:

Թեեւ հիմա ունեմ տեղեկատվության որոշակի պակաս, բայց պատկերացնում եմ այն լրջագույն դժվարությունները, որոնց առնչվում են տարբեր ոլորտների մեր գործարարները: Տարիների ընթացքում մարդկանց քայլ առ քայլ ստեղծածը, դրածը կարող է ջուրն ընկնել: Ես կողմ եմ, որ Հայաստանից արտահանումներ լինեն տարբեր ուղղություններով, ոչ միայն Եվրոպա, այլեւ՝ արաբական աշխարհ, ԱՄՆ եւ այլն, բայց հնարավոր չէ արտահանման շուկան մեկ օրում, մեկ ամսում, նույնիսկ մեկ տարում ամբողջությամբ փոխել:

Նոր շուկա պետք է մտնել հանդարտ, գրագետ, համբերատար՝ առանց նախկինը քանդելու, առանց նախկին տնտեսական կապերն ավերելու: Հիմա մենք անում ենք լրիվ հակառակը:

Իմ նախորդ ուղերձներից մեկում նշել էի, որ Ադրբեջանն ինտենսիվ մտնում է այն շուկաները, որտեղից մենք ինտենսիվ դուրս ենք գալիս: Ավանդական շուկաներ կորցնելուց հետո չափազանց դժվար է լինելու վերադառնալ հին դիրքերին, իսկ որոշ դեպքերում՝ ուղղակի անհնար: Նրանք, ովքեր ապրում եւ աշխատում են իրական կյանքում, սա շատ լավ գիտեն: Նրանք, ովքեր ապրում են կաբինետներում, սա չեն պատկերացնում:

Եթե այսօր քայլեր չձեռնարկենք, վաղը խնդիրներ են առաջանալու նոր ոլորտների համար: Իսկ քայլեր կան, եւ պետք է անել ամեն ինչ, որպեսզի հայ տնտեսվարողը, հայ գործարարը, հայ աշխատողը, հայ գյուղացին չկանգնի անդառնալի կորուստների առաջ: Ցավոք, ես հիմա չեմ կարող կոնկրետ քայլերով օգտակար լինել, բայց վստահեցնում եմ, որ քայլեր, հնարավորություններ կան: Բիզնեսը, աշխատատեղերը հիմնվում են երկար տարիների ընթացքում, բայց կարող են քանդվել ընդամենը մի քանի շաբաթում:

Ուզում եմ դիմել նաեւ այն ձեռնարկությունների աշխատակիցներին, որոնք ինձնից անկախ պատճառներով այսօր զրկվել են բնականոն աշխատանքի պայմաններից եւ հայտնվել անորոշության մեջ: Ձեր բոլորի հոգսն իմ հոգսն է, ձեր ցավն իմ ցավն է: Անհավանական էր պատկերացնել, որ սեփական երկրում կարող էին միտումնավոր կերպով վնասել աշխատող հիմնարկներին, կանգնեցնել գործող ձեռնարկությունները, թույլ չտալ հազարավոր աշխատող մարդկանց՝ գնալ աշխատանքի, երբ առանց այդ էլ երկիրը դժվար տնտեսական վիճակում է, բայց դե սա է մեր իրականությունը: Ես վստահ եմ, որ արդարությունը վերականգնվելու է, եւ բոլորդ վերադառնալու եք ձեր կանոնավոր աշխատանքին:

Ինչ վերաբերում է վերկուսակցական համագործակցությանը, ապա դա ավելի շատ մտածողության խնդիր է: Հայաստանն իրոք կանգնած է լուրջ խնդիրների առջեւ: Միայն Իրան-ԱՄՆ պատերազմը, Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը, մեր տնտեսության սուր ռիսկերը, Ադրբեջանի անթաքույց հավակնությունները հերիք են՝ հասկանալու մեր առաջ կանգնած ռիսկերի ահռելի ծավալը:

Այս պայմաններում մենք կարիք ունենք բոլոր կարող ուժերի եւ անհատների ներուժի: Հայաստանի եւ սփյուռքի: Այս պայմաններում ի՞նչ կուսակցական պատկանելություն, ի՞նչ կուսակցական նախասիրություն: Մենք ունենք ոլորտային հարյուրավոր մասնագետներ, որոնք կուսակցության անուն լսել չեն ուզում, բայց կարող են շատ մեծ օգուտ տալ մեր երկրին՝ որպես մասնագետ եւ որպես մարդ:

Որպես սրտացավ հայ, որպես Հայաստանում ամբողջ կյանքս ապրած եւ ստեղծած մարդ, ես այսօր ավելի քան երբեւէ զգում եմ այս գաղափարների կարեւորությունը:

Կենտրոն ՔԿՀ
27.07.26թ.»:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄՐՋԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանն Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած աշխատանքային այցի շրջանակում հանդիպել է ԻԻՀ ճանապարհների եւ քաղաքաշինության նախարար տիկին Ֆարզանե Սադեղի հետ:

Նախարարությունից հայտնում են՝ հանդիպմանը մասնակցել են նաեւ ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը, որը համակարգում է ճանապարհաշինության ոլորտը, եւ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Արկադի Չերչինյանը:

Նախարար Խուդաթյանը գոհունակությամբ արձանագրել է Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի շինարարության առաջընթացը:

Նախարարի խոսքով՝ ԻԻՀ-ն զգալիորեն ներգրավված է ՀՀ ենթակառուցվածքային ծրագրերում, ինչը վկայում է երկու երկրների միջեւ ձեւավորված ամուր տնտեսական համագործակցության եւ բարեկամական հարաբերությունների մասին:

Հանդիպման ընթացքում ճանապարհաշինության ոլորտին վերաբերող հարցերից բացի քննարկվել են նաեւ տրանսպորտի եւ ավիացիայի ոլորտներում համագործակցությանն առնչվող հարցեր:

Կողմերը պայմանավորվել են ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ երկու երկրների միջեւ բեռնափոխադրումների ծավալների ավելացման ուղղությամբ:

Քննարկվել է նաեւ Հայաստան-Իրան պետական սահմանին՝ Արաքս գետի վրա, երկրորդ կամրջի կառուցման նախաձեռնությանը վերաբերող հարցը: Նշվել է, որ դրա իրականացումը կբարձրացնի երկու երկրների միջեւ տրանսպորտային թողունակությունը եւ կնպաստի տնտեսական համագործակցության հետագա զարգացմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՎՏԱՆԳՎԱԾ Է

Գագիկ Ծառուկյանի թիմակիցները Իրանի դեսպանատան առաջ են: Նրանք ՀՀ-ում Իրանի դեսպան Խալիլ Շիրոզլամիին նամակ են հանձնել: Լրագրողների հետ զրույցում ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանը նշեց. «Մեզ համար անընդունելի է, որ ԻԻՀ երկու քաղաքացիների, խարդախների, 2 խաբեբաների պատճառով վտանգված են հայ-իրանական դարավոր բարեկամական հարաբերությունները: Գագիկ Ծառուկյանը մշտապես հանդես է եկել հայ-իրանական տնտեսական, մշակութային, առեւտրային, քաղաքական կապերի ամրապնդման դիրքերից եւ արել է առավելագույնը երկու երկրների միջեւ այդ կապերը զարգացնելու եւ ամրապնդելու ուղղությամբ: Եվ այսօր 2 խարդախ գործարարների կեղծ ցուցմունքի պատճառով իրականում վտանգված է հայ-իրանական բարեկամությունը»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՂԵՏԱԼԻ ՀՐԴԵՀՆԵՐ

Ֆրանսիայի եւ Իսպանիայի հարավային շրջաններում շարունակվող խոշոր անտառային հրդեհների հետեւանքով ավելի քան 320 հազար մարդ ստիպված է եղել լքել իր տունը: Հրդեհները շարունակում են արագ տարածվել, իսկ իշխանությունները մեծ ուժեր են կենտրոնացրել կրակը վերահսկելու համար: Ֆրանսիայի հարավարեւմտյան Ժիրոնդ (Gironde) դեպարտամենտում, որտեղ հրդեհը բռնկվել է անցած երեքշաբթի, արդեն 220 հազար մարդ է տարհանվել: Կրակը ոչնչացրել է շուրջ 42 հազար հեկտար տարածք եւ վտանգավոր կերպով մոտեցել է Բորդոյի մետրոպոլիտեն շրջանին: Տարհանված հազարավոր մարդիկ ժամանակավորապես տեղավորվել են ցուցահանդեսային կենտրոններում եւ մարզադահլիճներում ստեղծված ապաստարաններում: Ըստ տվյալների՝ հրդեհի մարմանը ներգրավված է 2500 հրշեջ, որոնց աջակցում են 1500 զինծառայող, 1200 ոստիկան եւ ժանդարմ, ինչպես նաեւ 18 օդային հրշեջ միջոց: Տեղական իշխանությունների տեղեկացմամբ՝ հրդեհի բռնկումից ի վեր 84 հրշեջ է վնասվածքներ ստացել: Իշխանությունները նաեւ հայտարարել են, որ արտակարգ իրավիճակի պատճառով արգելվել են մանկական ամառային ճամբարները, սկաուտական հավաքները եւ հաշմանդամություն ունեցող անձանց հանգստի ծրագրերը:

Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Լորան Նյունեսը հայտարարել է, որ իրավիճակը շարունակում է մնալ «չափազանց անբարենպաստ»: «Հրդեհը կրկին դարձել էր չափազանց ուժեղ եւ անկանխատեսելի՝ ստեղծելով սեփական քամիները եւ անկանոն կերպով առաջ շարժվելով դեպի Բորդոյի մետրոպոլիտեն շրջան»,- գրել է նա X-ում՝ նշելով, որ գիշերվա ընթացքում իրավիճակը որոշ չափով հանդարտվել է: Հրդեհաշիջման աշխատանքներին աջակցում են նաեւ տեղի ֆերմերները, որոնք հրշեջներին տրամադրում են ջրի ցիստեռններ եւ տեղանքի մասին իրենց գիտելիքները՝ հակահրդեհային գոտիներ եւ մուտքի ճանապարհներ ստեղծելու համար:

Միեւնույն ժամանակ, Իսպանիայում շարունակվում է պայքարը Մադրիդի շրջակայքում բռնկված խոշոր հրդեհների դեմ: Իշխանությունները հայտնել են, որ որոշ տարեց տարհանվածներ արդեն կարող են վերադառնալ իրենց տները, քանի որ հրշեջներին հաջողվել է մասամբ կայունացնել իրավիճակը: Երկրի այլ շրջաններում եւս շարունակվում են տարհանումները: Վալենսիայի շրջանում կիրակի իրականացվել են նոր տարհանումներ, իսկ շաբաթ օրը Վալենսիայի արվարձան Մանիսեսում բռնկված հրդեհի հետեւանքով մեկ մարդ զոհվել է: Սա Իսպանիայում այս տարվա անտառային հրդեհների առաջին զոհն է: Մեկ այլ խոշոր հրդեհ էլ ավերել է Ավիլա նահանգի տարածքներ: Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը պատրաստվում է այցելել Վալենսիայի հրդեհներից տուժած շրջաններ: Նա հայտարարել է, որ թեեւ «առջեւում դեռ դժվար ժամեր կան», սակայն անցած գիշերը դրական արդյունքներ են գրանցվել՝ կրակը վերահսկելու ուղղությամբ: Իսպանիայի կառավարության տվյալներով՝ երկրում 76 հազար մարդ տարհանվել է, իսկ եւս 30 հազար բնակիչ անվտանգության նկատառումներով ստիպված է մնալ սեփական տներում: Տարհանված բնակիչները մտահոգված են, թե ինչ վիճակում կգտնեն իրենց տները վերադառնալուց հետո:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՈՐՊՆՔ ԵՆ ՁԻՋԵԼ ԴԻՐՔԵՐԸ

ՀՀ ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2026 թվականի առաջին կիսամյակի՝ հունվար-հունիս ամիսների 1000 խոշոր հարկ վճարողների ամբողջական ցանկը, որը ցույց է տալիս հայրենի բիզնեսի իրական պատկերն ու վերջին ամիսներին արձանագրված ուշագրավ տեղաշարժերը:

ArmLur.am-ը ցանկը համեմատել է ընթացիկ տարվա առաջին եռամսյակի տվյալների հետ, եւ ակնհայտ է դարձել, որ խոշոր հարկատուների ցանկում լուրջ վերադասավորումներ են տեղի ունեցել: Առաջին վեց ամիսների ընթացքում 1000 խոշոր հարկատուները պետական բյուջե են վճարել ավելի քան 1 տրիլիոն 109.9 միլիարդ դրամ, ինչը զգալիորեն գերազանցում է առաջին եռամսյակի 459.2 միլիարդ դրամի ցուցանիշը:

ArmLur.am-ը պարզեց, որ ամենամեծ փոփոխություններից մեկը վերաբերում է ցանկի առաջատարին: Տարեսկզբին անսպասելիորեն երրորդ հորիզոնական իջած «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը» վերականգնել է իր առաջատարի տիտղոսը՝ վճարելով 41.61 միլիարդ դրամ եւ բարձրանալով առաջին տեղ: Դրա հետեւանքով առաջին եռամսյակում առաջին հորիզոնականը զբաղեցրած տեխնիկայի ներկրմամբ եւ վաճառքով զբաղվող «Մոբայլ Սենթր Արթ» ընկերությունը զիջել է դիրքը եւ 38.16 միլիարդ դրամով հանգրվանել երկրորդ տեղում: Տասնյակի ամենաթռիչքային աճը գրանցել է «Արդշինբանկը», որը 17-րդ հորիզոնականից միանգամից բարձրացել է 3-րդ տեղ՝ վճարելով 33.60 միլիարդ դրամ: Դիրքերը զիջել է էներգետիկ հսկա «Գազպրոմ Արմենիան»՝ 2-րդ տեղից իջնելով 4-րդ հորիզոնական (31.50 միլիարդ դրամ), ինչպես նաեւ ծխախոտի արտադրությամբ զբաղվող «Գրանդ Տոբակոն», որը 4-րդ տեղից նահանջել է 5-րդ հորիզոնական (28.95 միլիարդ դրամ): Ֆինանսական համակարգի մյուս հսկան՝ «Ամերիաբանկը», 13-րդ տեղից բարձրացել է 6-րդ հորիզոնական (22.15 միլիարդ դրամ): SS ոլորտի ներկայացուցիչ «Դիջիթեյնը» պահպանել է 7-րդ տեղը (17.91 միլիարդ դրամ), իսկ նույն ոլորտի «Սոֆթ - Կոնստրակտը» 5-րդ տեղից իջել է 8-րդ հորիզոնական (17.49 միլիարդ դրամ): Հանքարդյունաբերական «Կապանի լեռնահարստացման կոմբինատը» կտրուկ առաջընթաց է արձանագրել՝ 33-րդ տեղից բարձրանալով 9-րդ հորիզոնական (15.71 միլիարդ դրամ), իսկ տասնյակը եզրափակում է «ԻՄՎԲԱՄ»-ը (Wildberries), որը 6-րդ տեղից նահանջել է 10-րդ հորիզոնական (13.92 միլիարդ դրամ):

Հանրությանը քաջ հայտնի մյուս ընկերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսության տարբեր ճյուղերում նույնպես դիրքերի ակտիվ տեղաշարժեր են եղել: Բանկային համակարգում, բացի առաջատար եռյակ անցած «Արդշինբանկից» եւ «Ամերիաբանկից», առաջընթաց է գրանցել «Ինեկոբանկը»՝ 32-րդ տեղից բարձրանալով 21-րդ հորիզոնական (8.03 միլիարդ դրամ): «Կոնվերս Բանկը» 51-րդ տեղից հասել է 30-րդ հորիզոնական (5.55 միլիարդ դրամ), «ՎՏԲ-Հայաստան Բանկը» 69-րդ տեղից բարձրացել է 37-րդ հորիզոնական (4.65 միլիարդ դրամ), իսկ «Արարատբանկը» 65-րդ տեղից առաջացել է մինչեւ 51-րդ հորիզոնական (3.74 միլիարդ դրամ): Փոխարենը որոշակի դիրքեր է զիջել «Էվոկաբանկը»՝ 25-րդ տեղից իջնելով 31-րդ հորիզոնական (5.48 միլիարդ դրամ):

Հեռահաղորդակցության եւ կապի ոլորտի առաջատար օպերատորները եւս վերադասավորվել են. «Վիվա Արմենիան» 16-րդ տեղից թեթեւակի նահանջել է 19-րդ հորիզոնական (10.41 միլիարդ դրամ), «Յուքոմ» ընկերությունը 22-րդ տեղից իջել է 27-րդ հորիզոնական (5.81 միլիարդ դրամ), իսկ «Տելեկոմ Արմենիա» (Թիմ) ընկերությունը 31-րդ տեղից տեղափոխվել է 35-րդ հորիզոնական (4.81 միլիարդ դրամ):

Ավիացիայի, վառելիքի եւ ենթակառուցվածքների ոլորտում առանձնանում է «Արմենիա Միջազգային Օդանավակայաններ» ընկերությունը (Զվարթնոց օդանավակայան), որը 38-րդ տեղից կտրուկ բարձրացել է 16-րդ հորիզոնական (10.86 միլիարդ դրամ): Ավիափոխադրող «Ֆլայուան Արմենիան» 60-րդ տեղից հասել է 46-րդ հորիզոնական (3.99 միլիարդ դրամ): Վառելիքի շուկայում «Մաքս Օիլ» ընկերությունը 19-րդ տեղից իջել է 24-րդ հորիզոնական (6.78 միլիարդ դրամ), իսկ «Ֆլեշ» ընկերությունը զգալիորեն նահանջել է՝ 26-րդ տեղից հայտնվելով 42-րդ հորիզոնականում (4.29 միլիարդ դրամ): Ջրամատակարարման ոլորտի «Վեոլիա Ջուր» ընկերությունը պահպանել է կայունությունը՝ զբաղեցնելով 39-րդ տեղը (4.43 միլիարդ դրամ):

Առեւտրի եւ զովացուցիչ ըմպելիքների ու քաղցրավենիքի արտադրության ոլորտում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը 34-րդ տեղից բարձրացել է 26-րդ հորիզոնական (6.03 միլիարդ դրամ), «Գրանդ Քենդին» զբաղեցրել է 48-րդ տեղը (3.95 միլիարդ դրամ), իսկ սուպերմարկետների ցանցերից «ՍԱՍ-Գրուպը» հայտնվել է 69-րդ տեղում (2.63 միլիարդ դրամ) եւ «Նոր Ջովքը»՝ 78-րդ տեղում (2.44 միլիարդ դրամ):

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԲՌՆԱԳԱՆՁՎԻ 1 ՄԻԼԻԱՐԴ 150 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի հուլիսի 23-ի վճռով բավարարել է Դատախազության հայցապահանջը՝ վճռելով 2 ՍՊ ընկերությունների տնօրեն Վ.Ա.-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 1 միլիարդ 150 միլիոն 584 հազար դրամ՝ որպես պետությանը պատճառված վնասի գումար: Այս մասին հայտնել են ՀՀ գլխավոր դատախազությունից:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան ընդդեմ Վ.Ա.-ի՝ պետությանը պատճառված 1 միլիարդ 150 միլիոն 584 հազար դրամ վնասի բռնագանձման պահանջով:

Հայցապահաջի հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ 2026 թվականի մարտի 17-ին Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարանի դատավճռով՝ Վ.Ա.-ն մեղավոր էր ճանաչվել Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված արարքի կատարման մեջ: Մասնավորապես՝ Վ.Ա.-ն, հանդիսանալով 2 ՍՊ ընկերությունների մասնակից եւ գործադիր մարմնի ղեկավար՝ տնօրեն, նախնական համաձայնության գալով նշված ընկերությունների փաստացի ղեկավարումը ստանձնած անձի հետ, ունենալով հարկային օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում հարկային պարտավորությունները հաշվարկելու եւ կատարելու պարտավորություն, առանձնապես խոշոր չափերով՝ 1 միլիարդ 150 միլիոն 584 հազար դրամ հարկեր վճարելուց խուսափելու նպատակով, կեղծ տվյալներ է ներառել ՍՊ ընկերությունների ամսական եկամտային հարկի եւ սոցիալական վճարի, ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի միասնական, տարեկան շահութահարկի հաշվարկներում, ինչի հետեւանքով խուսափել էր 584 միլիոն 864 հազար դրամ եկամտային հարկ, 553 միլիոն 825 հազար դրամ ավելացված արժեքի հարկ եւ 11 միլիոն 894 հազար դրամ շահութահարկ պետական բյուջե վճարելուց:

ՎԻՐԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Է 624-Ի

Իրանի դեմ գործողության ընթացքում վիրավորված ամերիկացի զինվորների թիվը հասել է 624-ի, հաղորդում է «Նյու Յորք Թայմս»-ը՝ հղում անելով Պենտագոնի տվյալներին:

Կիրակի օրը Պենտագոնը սկսել է հրապարակել Մերձավոր Արեւելքում ռազմական գործողությունների ընթացքում զոհերի մասին տեղեկություններ:

Հինգշաբթի օրը NYT-ը հաղորդեց, որ Պենտագոնի կայքում Իրանի հետ դիմակայության ընթացքում ամերիկացի զինվորների մահվան մասին հաղորդված թիվը հանկարծակի նվազել է: Հրատարակությունը պնդում էր, որ պաշտոնյաները միջադեպի վերաբերյալ հակասական տեղեկություններ են տվել: Գործակալության խոսնակ Շոն Փարնելը թերթի հրապարակումը սուտ է անվանել:

ԿՐԱԿՈՑՆԵՐԻՑ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԴԱՐՁԱՎ

Ազգային Ժողովի նորընտիր պատգամավորների թվում է նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչ Լյուդվիգ Գյուլնազարյանը, որի քաղաքական կենսագրությունը վերջին երկու տարիներին աչքի է ընկել ոչ միայն պաշտոնական նշանակումներով, այլեւ աղմկահարույց միջադեպերով, ընտրական պարտությամբ եւ հակասական քննարկումներով:

Գյուլնազարյանը քաղաքական գործունեությունը ծավալել է որպես Փարաքար համայնքի ավագանու անդամ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից: 2024 թվականին նա ընտրվեց Արմավիրի մարզի Փարաքար խոշորացված համայնքի ղեկավար՝ ստանալով ավագանու 11 անդամների աջակցությունը:

Սակայն նրա պաշտոնավարումը երկար չտեւեց: Նույն տարում տեղի ունեցած աղմկահարույց քրեական միջադեպից հետո, որի ընթացքում նա գտնվել էր կրակոցների վայրում եւ ստացել հրազենային վնասվածք, Գյուլնազարյանը հրաժարական ներկայացրեց: Թեեւ նա պնդում էր, որ միջադեպի հետ որեւէ առնչություն չի ունեցել, հայտարարեց, որ պաշտոնից հեռանում է՝ նախաքննությանը չխանգարելու համար: Այդ դեպքը դարձավ նրա քաղաքական կենսագրության ամենաքննարկվող դրվագներից մեկը:

Սակայն ՔՊ-ում, կարծես, այդ պատմությունը չխանգարեց նրա քաղաքական առաջխաղացմանը: Ընդհակառակը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կուսակցության ներքին փրայմերիզում նա դարձավ ամենաշատ ձայներ հավաքած թեկնածուներից մեկը՝ ստանալով 594 ձայն եւ զգալիորեն առաջ անցնելով մրցակիցներից:

2025 թվականի հունվարին Արմավիրի մարզպետի որոշմամբ Գյուլնազարյանը նշանակվեց Փարաքար համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Սակայն ընդամենը երկու ամիս անց՝ մարտի 30-ին կայացած արտահերթ ընտրություններում, նա չկարողացավ ստանալ համայնքի բնակիչների վստահությունը: Ընտրություններում հաղթեց ընդդիմադիր թեկնածու Վալոդյա Գրիգորյանը, իսկ ՔՊ-ն զիջեց «Միասնություն» դաշինքին: Այդ ընտրությունները ուղեկցվում էին լարված քաղաքական մթնոլորտով, իսկ ամիսներ անց համայնքը կրկին հայտնվեց հանրության ուշադրության կենտրոնում՝ Վալոդյա Գրիգորյանի սպանությունից հետո:

Գյուլնազարյանի անունը կրկին շրջանառվեց նաեւ 2026 թվականին: Այդ ժամանակ հայտնի դարձավ, որ նա աշխատում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության Արմավիրի մասնաճյուղի ղեկավարի պաշտոնում: Միաժամանակ քննարկումների առիթ դարձավ այն հանգամանքը, որ նա ակտիվորեն ներգրավված էր ՔՊ-ի նախընտրական քարոզարշավում, ինչը հանրային դաշտում հարցեր առաջացրեց՝ արդյոք քարոզչությունն իրականացվել է աշխատանքային ժամերի հաշվին, թե ոչ:

Հետաքրքիր է նաեւ, որ, ի տարբերություն բազմաթիվ այլ պաշտոնյաների, Լյուդվիգ Գյուլնազարյանի կրթության վերաբերյալ հանրային աղբյուրներում գրեթե որեւէ տեղեկություն հասանելի չէ:

Այս ամենի ֆոնին քաղաքական դիտորդների համար հարցական է մնում, թե ինչն էր այն հիմնական գործոնը, որի շնորհիվ ընտրություններում սեփական համայնքում պարտված գործիչը հայտնվեց Ազգային Ժողովում: Եթե Փարաքարի բնակիչները նրան չվստահեցին համայնքը ղեկավարելու մանդատը, ապա ինչո՞ւ ՔՊ-ն որոշեց վստահել նրան խորհրդարանական մանդատը: Այդ հարցի պատասխանը, թերեւս, դեռեւս բաց է մնում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ

Հուլիսի 19-ին վիճաբանություն եւ ծեծկռտուք է տեղի ունեցել Արմավիրի մարզում:

Ժամը 00:35-ի սահմաններում ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վաղարշապատի բաժին է զանգահարել Արմավիրի մարզի 38-ամյա բնակչուհին եւ հայտնել, որ իր ամուսնուն՝ Արմավիրի մարզի բնակիչ, 53-ամյա Գ. Մ.-ին, շուրջ 15 հոգի, իր երեխաների ներկայությամբ, ծեծի են ենթարկել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է մեկնել ոստիկանության Վաղարշապատի բաժնի օպերատիվ խումբը՝ ավագ համայնքային ոստիկանի գլխավորությամբ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Գ. Մ.-ն ոստիկաններին հայտնել է, որ հուլիսի 18-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, Թաիրով գյուղի Լեոյի փողոցում իրեն են մոտեցել անհայտ անձինք՝ «BMW» մակնիշի ավտոմեքենայով: Նրանց պահանջով ինքը նստել է ավտոմեքենան, որից հետո իրեն տեղափոխել են Լեոյի փողոցի հարակից տարածքում գտնվող կիսակառույց շինություն, որտեղ ծեծի են ենթարկել՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Գ. Մ.-ին ծեծի ենթարկած անձինք են Արմավիրի մարզի բնակիչներ՝ 43-ամյա Կարեն Ղ.-ն, 36-ամյա Շավարշ Փ.-ն եւ Երեւանի բնակիչ, 30-ամյա Օնիկ Մ.-ն:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները միջոցառումներ են ձեռնարկում նշված անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

Դեպքի փաստով ոստիկանության Վաղարշապատի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

ԱՎԱՐՏՎԵԼ Է ԿՐԱԿՈՑՆԵՐՈՎ

Հուլիսի 20-ին կրակոցներ են հնչել Արմավիրի մարզում: Պարզվել է, որ ժամը 17:00-ի սահմաններում, Արմավիրի մարզի բնակիչ 17-ամյա Ջ. Տ.-ն Գայ գյուղում գտնվող «Էլինար» ռեստորանային համալիրում, մասնակցելով ազգականի բանակից վերադառնալու կապակցությամբ կազմակերպված խնջույքին, իր հայրիկին պատկանող «Chevrolet» մակնիշի ավտոմեքենայի սրահի պահոցից վերցրել է վերջինիս պատկանող ատրճանակը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, անչափահասը, հասարակության նկատմամբ անհարգալից, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք դրսեւորելով, խախտել է մարդկանց անդորրը եւ հասարակական նշանակության օբյեկտի բնականոն աշխատանքը՝ մի քանի անգամ կրակոցներ արձակելով դեպի օդ: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների կողմից հուլիսի 20-ին Ջ. Տ.-ն հայտնաբերվել ու ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Վաղարշապատի բաժին, որտեղ փաստերի ճնշման տակ խոստովանել է իր կողմից կատարված արարքը: Նշված ատրճանակը Արման Տ.-ն ինքնակամ ներկայացրել է ոստիկանություն, իսկ վերոնշյալ ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Վաղարշապատի բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Դեպքի փաստով ոստիկանության Վաղարշապատի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

ԼՈՒՐԵՐ

1 ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործության եւ խուլիգանության հատկանիշներով: 1 անձ ձերբակալվել է: Հայտնում է Քննչական կոմիտեն:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է՝ միջադեպի մյուս մասնակիցներին հայտանաբերելու ուղղությամբ:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ի հետ զրույցում Ավետ Կոնջորյանը հայտնել էր, որ շատ վատ է զգում իրեն եւ չհայտնեց, թե ովքեր են իրեն ծեծի ենթարկածները:

Շրջանառվող տեղեկությունների համաձայն, Հայկ Կոնջորյանի եղբորը ծեծի են ենթարկել Կոտայքի մարզում գործող բարձրահարկ շենքերի կառուցմամբ զբաղվող «Միլլոն Մայնինգ» ընկերության տնօրեն Բաբկեն Հովակիմյանն ու այսպես ասած վերջինիս «մաֆիան». Հովակիմյանի ընտանեկան վարորդ Ռոբերտ Սարգսյանը, Աբովյան համայնքի ավագանի Նաիրի Հակոբյանը, շատերին հայտնի Էլլարի Սաքոն, ով հանդիսանում է ավագանու անդամ Նաիրի Հակոբյանի ընկերը, Բաբկեն Հովակիմյանի ընկեր արցախցի Գրիշա Գրիգորյանը, եւ ոմն Ազատ Շահոյան:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՉԻ ԿԱՏԱՐԵԼ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթի նախաքննությամբ հիմնավորվել է, որ Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը, ծառայողական լիազորություններն օգտագործելով ծառայության շահերին հակառակ, անձնական շահագրգռվածությունից ելնելով էական վնաս է պատճառել ՍՊ ընկերության իրավունքներին եւ օրինական շահերին: Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ հիշյալ ընկերությունը Երեւանի քաղաքապետարանի կողմից հայտարարված ճանապարհային նշանների տեղադրման գնման մրցույթում ճանաչվել է հաղթող եւ կողմերի միջեւ կնքվել է համապատասխան պայմանագիր:

Սակայն քաղաքապետարանի պաշտոնատար անձը, նպատակ ունենալով գործել հօգուտ իր հետ փոխկապակցված մեկ այլ ՍՊ ընկերության, պայմանագրով չնախատեսված հիմքով մրցույթում հաղթած ընկերությունից պահանջել է 10 տարվա բանկային երաշխիք: Այնուհետեւ, անտեսելով նշված պահանջի իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու գործընթացում նոր գնման ընթացակարգ սկսելու արգելքը, հիշյալ պաշտոնատար անձը նախաձեռնել է այն, որի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչել վերջինիս հետ փոխկապակցված ընկերությունը, եւ կնքվել է 75 մլն դրամ արժեքով պայմանագիր:

Քաղաքապետարանի պաշտոնատար անձին մեղադրանք է ներկայացվել: Նրա պաշտոնավարումը կասեցվել է: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են Հակակոռուպցիոն դատարան:

● *Ըստ վիճակագրության՝ հուլիսի 20-ից 27-ը մայրաքաղաքում հայտնաբերել են ոչ սթափ 163 վարորդ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴՈՒՅԼԵՐ՝ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

Տուրիստական Դիլիջան քաղաքի փողոցներում՝ հատկապես Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրերին, դույլերով սունկ, մրգեր, բանջարեղեն, նաեւ խորոված՝ համար փայտի կապուկներ են դրված: Դիլիջան քաղաքում եւ այդ համայնքի 6 գյուղերում գյուղատնտեսական շուկա չկա: Դիլիջանի բնակիչները դժգոհում են, որ քաղաքում գյուղատնտեսական մթերքները Տավուշի մարզկենտրոն Իջեւանի համեմատ բավական թանկ են: Պատճառն այն է, որ Դիլիջան քաղաքում, ի տարբերություն Իջեւանի, գյուղատնտեսական շուկա չի գործում: Դիլիջանում եթե շուկա գործեր, կարող էին իրացվել Դիլիջանի եւ համայնքի 6 գյուղերի բնակիչների աճեցրած գյուղատնտեսական մթերքները: Նախկինում՝ մի քանի տարի առաջ, «Հայփոստ»-ի Դիլիջանի մասնաճյուղի շենքի մոտ գտնվող ավտոկանգառի հետեւի մասում տեղադրված փայտյա 3 փոքրիկ տնակները վարձակալությամբ տրամադրվել էին համայնքի բնակիչ գյուղացիներին՝ իրենց աճեցրած գյուղատնտեսական մթերքները վաճառելու համար: Սակայն 3 փոքր կրպակները այժմ չեն գործում, գործելու դեպքում էլ դրանք գյուղատնտեսական շուկային չեն կարող փոխարինել: Դիլիջան համայնքը մեծ բյուջե ունի, կարող է գյուղատնտեսական շուկա գործարկելու համար պահանջվող ծախսերը կատարել: Համայնքապետարանի համար դժվար չէ լուծել նաեւ շուկայի համար տարածքի հատկացման հարցը: Դիլիջանի համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը մշտապես որոշումներ է ընդունում բնակիչներին, այդ թվում՝ Երեւանում, այլ քաղաքներում բնակվողներին, Դիլիջանում հողամասեր հատկացնելու վերաբերյալ, նա պարտավոր է շուկայի համար հողահատկացում անել: Ավելի քան 5 տարի որպես համայնքի ղեկավար պաշտոնավարող Դ. Սարգսյանը Դիլիջանում շուկայի գործարկման հարցը չի լուծել:

ՈՒՌՃԱՑԱԾ Է

Հուլիսի 15-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշի մարզպետարանի աշխատակազմում ներկայումս քանի՞ փորձագետ է աշխատում, ովքե՞ր են նրանք, մասնագիտական ի՞նչ կրթություն ունի նրանցից յուրաքանչյուրը, յուրաքանչյուրը ո՞ր ոլորտում ի՞նչ գործառույթներ է իրականացնում, որքա՞ն է կազմում նրանցից յուրաքանչյուրի աշխատավարձը»: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում ներգրավված է չորս փորձագետ: Երեք փորձագետ ունի բարձրագույն կրթություն, մեկը՝ միջնակարգ: Երկու փորձագետ ներգրավված է մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունում, մեկ փորձագետ՝ աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունում, մեկ փորձագետ՝ աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ոլորտի հարցերի վարչությունում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՆԱԽԿԻՆ ՓՈԽՏՆՕՐԵՆԻՑ՝ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Արամազդ Ղալամքարյանը պաշտոնը զբաղեցնում է 2025 թվականի սեպտեմբերից, սակայն նրա կենսագրությունն ու քաղաքական ճանապարհը ցույց են տալիս, որ նա գործող իշխանության համար նոր մարդ չէ:



ArmLur.am-ի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մինչեւ միջազգային կառույցներում աշխատելը՝ Ղալամքարյանը 2009-2010 թվականներին եղել է «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի փոխտնօրենը: Հենց այս ընկերությունն էր հրատարակում Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթը: Տարիներ անց Փաշինյանի նախկին թիմակիցն ու այսօր արդեն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամը նշանակվեց երկրի ամենախնդրահարույց ոլորտներից մեկի՝ Ջրային կոմիտեի ղեկավար:

Ուսումնասիրելով պաշտոնյայի՝ 2025 թվականի հայտարարագիրը՝ պարզ է դառնում, որ նա Երեւանում ունի երեք բնակարան: Առաջինը ձեռք է բերել 2000 թվականին, երկրորդը՝ 2022-ին, իսկ երրորդը դարձել է նրա սեփականությունը 2025 թվականի մայիսի 24-ին՝ նվիրատվության եղանակով: Այսինքն՝ պետական բարձր պաշտոն զբաղեցնելուց ընդամենը ամիսներ առաջ նա բնակարան է նվեր ստացել: Շարժական գույքի ցանկում Ղալամքարյանը հայտարարագրել է նաեւ 2016 թվականի արտադրության «Subaru» մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2023 թվականին:

Ֆինանսական միջոցների մասով Ջրային կոմիտեի նախագահի հայտարարագիրը նույնպես հետաքրքիր պատկեր է ներկայացնում: Տարվա սկզբին նա ունեցել է 2500 եվրո եւ 2892 ԱՄՆ դոլար, իսկ տարվա ավարտին դոլարային միջոցներն աճել են՝ հասնելով 5300-ի: Բացի այդ, պաշտոնը ստանձնելու պահին հայտարարագրել է նաեւ 3 միլիոն դրամ կանխիկին հավասարեցված միջոցներ: 2025 թվականի ընթացքում նրա պաշտոնական եկամուտը կազմել է մոտ 3.8 միլիոն դրամ՝ բացառապես Ջրային կոմիտեից ստացած աշխատավարձի հաշվին:

Միաժամանակ, պաշտոնյան հայտարարագրել է նաեւ զգալի վարկային պարտավորություններ: Պաշտոնը ստանձնելու պահին երեք վարկերի ընդհանուր մնացորդը կազմել է շուրջ 18 միլիոն դրամ, այդ թվում՝ հիփոթեքային վարկ: Տարվա ընթացքում նա մարել է շուրջ 9.6 միլիոն դրամ, ինչի արդյունքում պարտավորությունները նվազել են մինչեւ 12.6 միլիոն դրամ:

Այսպիսով, Հայաստանի ջրային տնտեսության ղեկավարումը վստահվել է մի պաշտոնյայի, որը ոչ միայն երկար տարիներ աշխատել է միջազգային կառույցներում, այլեւ ժամանակին ղեկավար պաշտոն է զբաղեցրել Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթը հրատարակող ընկերությունում եւ այսօր իշխող կուսակցության անդամ է: Իսկ թե որքանով այդ անցյալն ու քաղաքական կապերը կվերածվեն արդյունավետ կառավարման մի ոլորտում, որտեղ տարիներ շարունակ կուտակվել են ոռոգման, ջրամատակարարման եւ ենթակառուցվածքների լրջագույն խնդիրներ, դեռեւս բաց հարց է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԾՐԱԳԻՐԸ ԿԱՎԱՐՏՎԻ 2027-ԻՆ

Տավուշի մարզի սահմանամերձ Դովեղ գյուղի նոր դպրոցի շինարարությունը, որը պետք է ավարտված լիներ դեռեւս 2024 թվականին, հերթական անգամ հետաձգվել է: Այժմ իշխանությունները խոսանում են, որ շուրջ 1 միլիարդ 218 միլիոն դրամ արժողությամբ նախագիծը կավարտվի միայն 2027 թվականին:

Armlur.am-ին Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մարզում ժամկետանց պետական ծրագրերից միակն այսօր Դովեղի դպրոցի շինարարությունն է:

Ըստ նրա՝ ծրագրի ավարտը նախատեսվում է 2027 թվականին: Մարզպետարանը նաեւ տեղեկացրել է, որ մարզում կա մեկ ժամկետային ծրագիր՝ Այրումի մանկապարտեզի բակի բարեկարգումը, որի ավարտը նախատեսված է հուլիսի 31-ին: Ծրագրի երկարաձգման պատճառ են դարձել երկարատեւ անձրեւները եւ ցանկապատի համար անհրաժեշտ նյութերի բացակայությունը հայկական շուկայում:

Դովեղի դպրոցի շինարարությունը մեկնարկել էր դեռեւս 2022 թվականի վերջին: Ժամկետի առաջին երկարաձգումից հետո այն պետք է ավարտվեր 2024 թվականի հունիսին, սակայն աշխատանքները բազմաթիվ խոչընդոտների պատճառով այդպես էլ ավարտին չեն հասցվել:

Սկզբնական շրջանում շինարարությունն իրականացրել է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն: Սակայն 2024 թվականի գարնանը աշխատանքները մի քանի ամսով դադարեցվել էին, քանի որ աշխատավարձերի ուշացման պատճառով տեղացի բանվորները հրաժարվել էին շարունակել աշխատանքը: Նրանց փոխարինել էին նախ հնդիկ, ապա՝ արաբ աշխատողները:

Խնդիրները միայն դրանով չեն սահմանափակվել: Քաղաքաշինության կոմիտեի մասնագիտական ուսումնասիրություններին արդյունքում արձանագրվել էր, որ կապալառուն աշխատանքներն իրականացրել է պայմանագրային ժամկետների կոպիտ խախտումներով, ինչպես նաեւ նախագծային լուծումներից եւ պահանջվող որակից շեղումներով: Այդ հանգամանքները հաստատվել էին նաեւ լաբորատոր փորձաքննություններով:

Արդյունքում 2025 թվականի փետրվարին Քաղաքաշինության կոմիտեն լուծարել էր «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը: Ընկերությունը դատարանում վիճարկել էր այդ որոշումը, եւ հայցի ապահովման միջոց կիրառելու հետեւանքով շինարարությունը ժամանակավորապես կրկին կասեցվել էր: Սակայն արդեն 2025 թվականի ապրիլին դատարանը մերժել էր ընկերության պահանջները՝ վճիռ կայացնելով հօգուտ Քաղաքաշինության կոմիտեի:

Դովեղի վարչական ղեկավար Գնել Կիրակոսյանի տեղեկացմամբ՝ այժմ շինարարությունն իրականացնում է նոր կապալառուն՝ «Պրոմ գրուպ» ՍՊԸ-ն, որն արդեն վերսկսել է աշխատանքները:

Դպրոցի կառուցման ընթացքում խնդիրներ էին առաջացել նաեւ հարակից ենթակառուցվածքների հետ: Շինարարության մեկնարկից շուրջ չորս տարի առաջ վնասվել էր գյուղ մտնող հիմնական ճանապարհի մի հատվածը: Այժմ այդ ճանապարհը լայնացվել է, կառուցվում է նաեւ պաշտպանիչ հենապատ, որի շինարարությունը, վարչական ղեկավարի խոսքով, կավարտվի մոտ մեկ ամսից:

Այսպիսով, Դովեղի դպրոցի շինարարությունը, որը պետք է օրինակելի կրթական ծրագիր դառնար սահմանամերձ համայնքի համար, արդեն վերածվել է երկարամյա շինարարական ոդիսականի: Ավելի քան մեկ միլիարդ դրամ արժողությամբ պետական ծրագիրը ժամկետների խախտումների, որակի խնդիրների, դատական վեճերի եւ կապալառուների փոփոխության հետեւանքով հետաձգվել է առնվազն երեք տարով՝ թողնելով գյուղի երեխաներին դեռեւս առանց նոր դպրոցի:

Ո. ՍԱՐԳՍՅԱՆ

● *Հուլիսի 20-ից 27-ը Հայաստանի Հանրապետության մարզերում պարեկները հայտնաբերել են ոչ սթափ 318 վարորդ:*

ԲԱՆԿԵՐ

ՈՒԺԵՂ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Մենք կրկին Seaside Startup Summit-ի ուժեղ գործընկերն ենք: Հուլիսի 26-ից օգոստոսի 1-ը Արդշինբանկի տաղավարում եւ ոչ միայն, խոսելու ենք բիզնեսի համար ստեղծված նոր սերնդի թվային լուծումների մասին, որ արդեն այսօր առաջարկում ենք մեր հաճախորդներին:

Ինչ կարող եք անել Սեւանում.

ծանոթանալ վերագործարկված SME թվային հարթակին եւ դրա նոր հնարավորություններին,

բացահայտել նորացված iBanking համակարգի առավելությունները,

ստանալ անհատական խորհրդատվություն մեր մասնագետներից եւ ընտրել ձեր բիզնեսին համապատասխան լուծումները,

ձեռք բերել Mastercard World քարտը ստանալ նվեր,

մասնակցել ինտերակտիվ խաղերի եւ վիկտորինաների ու ստանալ նվերներ:

Կհանդիպենք Seaside Startup Summit Armenia 2026-ին՝ Արդշինբանկի տաղավարում:

www.ardshinbank.am I 012 22 22 22

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

HATIS CHALET

Hatis Chalet-ը գործունեությունը սկսել է 2023 թվականին՝ մեկ փայտե էկոտնակով, որը նախատեսված էր բնության գրկում հանգիստը նախընտրողների համար:

Հյուրերի աճող հետաքրքրության շնորհիվ 2025 թվականին կառուցվել է երկրորդ էկոտնակը՝ ավելի ժամանակակից լուծումներով, ընդարձակ տարածքով եւ հանգստի համար առավել հարմարավետ պայմաններով: Առաջիկայում նախատեսվում է համալիրն ընդլայնել եւս մեկ նոր էկոտնակով:

Զարգացման ծրագրերի իրականացման ընթացքում Hatis Chalet-ը համագործակցել է Կոնվերս Բանկի հետ՝ օգտվելով Converse SME վարկատեսակից: Հանգստավայրի տնօրեն Գեւորգ Աբգարյանի խոսքով, Բանկի հետ համագործակցությունը հաջողված է. գոհ են թե առաջարկվող պայմաններից, թե սպասարկման որակից:

Այսօր Hatis Chalet-ում շարունակում են մշակել զարգացման նոր ծրագրեր՝ նպատակ ունենալով ընդլայնել հանգստի հնարավորություններն ու հյուրերին առաջարկել ավելի հարմարավետ պայմաններ:

Այստեղ վստահ են, որ վստահելի ֆինանսական գործընկերոջ աջակցությամբ զարգացման ծրագրերն ավելի արագ են դառնում իրականություն:

Մանրամասն՝ conversebank.am,
010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ԱՄՓՈՓԵԼ Է Գ

ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Աշխատատեղեր ու արդիական ենթակառուցվածքներ. Հայէկոնոմբանկն ամփոփել է Ջինվորի տան հետ 2025թ. սոցիալական ծրագիրը:

Ամենօրյա հոգածություն եւ շոշափելի արդյունքներ. Հայէկոնոմբանկն ու Ջինվորի տունը ներկայացնում են մեկամյա նախաձեռնության արդյունքները:

2025թ. Բանկի տարեկան ժողովին կորպորատիվ պատասխանատվության շրջանակում հայտարարվեց Ջինվորի տան հետ կարեւոր ծրագրի մեկնարկի մասին, որի համար հատկացվեց 50 մլն դրամ: Ծրագիրը 2 հիմնական բաղադրիչ ուներ. առաջինը կրթական ծրագիր էր զինհաշմանդամների համար՝ Բանկում աշխատանքի անցնելու հնարավորությամբ, իսկ երկրորդ բաղադրիչն ուղղված էր Ջինվորի տան թողունակության մեծացմանը՝ ստացիոնար բուժման հնարավորությունների ավելացմամբ:

Կրթական ծրագրի շրջանակում՝

շուրջ 30 շահառու անցել է ընդհանուր 93 ժամ տեւողությամբ մասնագիտական վերապատրաստում, որը ներառել է օտար լեզուների, համակարգչային հմտությունների, «փափուկ» հմտությունների (soft skills) դասընթացներ եւ բանկային գործի վերաբերյալ սեմինար-քննարկումներ,

14 մասնակից հետաքրքրված է եղել Բանկում աշխատանքի անցնելու հնարավորությամբ,

7 մասնակից հաջողությամբ ներգրավվել է պրակտիկայի ծրագրում,

4 շահառու շարունակել է վճարովի ստաժավորումը Բանկի Գլխամասային գրասենյակում եւ մասնաճյուղերում,

նոր հաստիքների առկայությանը զուգահեռ՝ ծրագրի մասնակիցների ներգրավումը Բանկի թիմում շարունակվելու է:

Ենթակառուցվածքների բարելավման շրջանակում՝

ամբողջացվել եւ կարգավորվել է շենքի հակահրդեհային համակարգը՝ որպես կարեւոր անվտանգության բաղադրիչ,

արդիականացվել է 6 տոննա տարողությամբ ջրի ռեզերվուարի ամբողջական համակարգը, փոխարինվել է շենքի ջեռուցման եւ տաք ջրի համակարգի գլխավոր պոմպը,

կենտրոնի վիրաբուժական եւ վերականգնողական բաժանմունքները համալրվել են նորագույն բժշկական սարքավորումներով եւ գործիքներով,

ձեռք է բերվել Hongqi մակնիշի էլեկտրական ավտոմեքենա, որը ծառայում է շահառուների կարիքներին,

իրականացվել են լայնածավալ նորոգման եւ կառուցապատման աշխատանքներ:

«Այս ծրագիրը Ջինվորի տան հետ Հայէկոնոմբանկի առաջին համագործակցությունն էր, եւ կարճ ժամանակահատվածում արձանագրել ենք իրապես շոշափելի արդյունքներ: Մենք առանձնակի ուշադրությամբ եւ հոգածությամբ ենք իրականացրել այս ծրագիրը՝ կարեւորելով հայրենիքի պաշտպանների համար առավել անվտանգ ու հարմարավետ միջավայրի ձեւավորումը, ինչպես նաեւ նրանց մասնագիտական ինտեգրումն ու կայուն աշխատանքով ապահովումը», - նշում է Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրենի գործառնական գծով տեղակալ Վահե Ղազարյանը:

Իր հերթին, Ջինվորի տան տնօրեն Հայկուհի Մինասյանը, անդրադառնալով ծրագրի կարեւորությանը, նշում է. «Հայէկոնոմբանկի շնորհիվ Ջինվորի տունը կարողացավ լուծել երկարաժամկետ խնդիրներ: Թե՛ կրթական, թե՛ վերանորոգման եւ թե՛ մյուս հարցերը, որ լուծում ստացան Բանկի աջակցության շնորհիվ՝ էական փոփոխություններ են ենթադրում զինհաշմանդամների կյանքում եւ Ջինվորի տան աշխատանքներն առավել որակյալ կազմակերպելու հարցում: Պատերազմից այսքան տարի անց սոցիալական նման մեծ պատասխանատվությունը բացառիկ երեւույթ է»:

86 86 I aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԿԱՅԱՑԵԼ Է ՓԱՌԱՏՈՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՎԱՔԸ Գ

Ֆասթ Բանկի հովանավորությամբ ս.թ. հուլիսի 17-19-ը Սեւանա լճի ափին կայացել է «Հուսո առագաստ» հեղինակային երգի միջազգային փառատոնի եզրափակիչ հավաքը:

«Բարդերի» ակումբի նախաձեռնությամբ արդեն 12-րդ տարին անընդմեջ իրականացվող փառատոնն այս տարի եւս հնարավորություն է տվել երիտասարդ տաղանդներին ելույթ ունենալ արդեն կայացած, հայտնի արտիստների հետ:

Երգահան Էդուարդ Ջորիկյանն ընդգծել է, որ փառատոնը սիրված միջոցառում է դարձել նաեւ արտասահմանից ժամանած հյուրերի համար. «Մենք ունենք, այսպես ասած, ավանդական հյուրեր՝ Լեհաստանից, Բելառուսից, Վրաստանից, մարդիկ, ում հետ վաղուց արդեն ընկերական հարաբերություններ են, միշտ սպասվող մեր փառատոնի հյուրերն են իրենք», - ասել է նա:

«Հուսո առագաստը» համաշխարհային բարդային ընտանիքում եզակի հարթակ է, որտեղ այսքան մեծ թվով երիտասարդներ են ներգրավված: Արտասահմանցի հյուրերն այնքան են սիրում հայկական երգերը, որ թարգմանում են դրանք եւ կատարում իրենց երկրներում:

«Ինչպես ասաց մեր հյուրերից մեկը՝ զարմանալի է եւ համաշխարհային բարդային ընտանիքում չդիտված երեւույթ, որ այս թվով երիտասարդներ են մասնակցում: Ուստի փառատոնի կարեւորությունը, ըստ էության, հենց այդ ժանրի տարածմանն է վերաբերում: Այդ տեսակետից մենք անսահման երախտապարտ ենք մեր բոլոր գործընկերներին, ովքեր մեզ աջակցում են այդ հարցում, եւ Ֆասթ Բանկը մեր կողքին տարիներ շարունակ արդեն գլխավոր հովանավոր է: Շատ ուրախ եմ այդ համագործակցության համար, շնորհակալություն այդ կարեւոր առաքելությունը տարածելու համար», - նշել է հեղինակ կատարող Արմինե Հայրապետյանը:

Ֆասթ Բանկը շարունակում է գործուն աջակցություն տրամադրել մշակութային եւ երիտասարդական նախաձեռնություններին՝ նպատակ ունենալով նպաստել ոլորտի զարգացմանը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ «ՊԱՏԱՀԱԲԱՐ» ՀԱՅՏՆՎՈՒՄ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ «ՊԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՑՈՐԴՆԵՐԸ»

Սոցցանցերում հայտնի բլոգեր Ամելիի շուրջ ծավալված «ֆոփիի» եւ կեղծ կոնտենտի վեճը նոր շերտեր է բացահայտում, երբ ուսումնասիրում ենք նրա տեսանյութերի հերոսներին:

Բլոգեր Կամո Թովմասյանի պնդումը, թե Երեւանի Պուշկինի փողոցում նկարահանվող փողոցային նորաձեւության (street style) տեսանյութերը նախապես բեմադրված են, հաստատվում է պարզ տրամաբանությամբ. եթե անցորդները գործում են իրական պատահականության սկզբունքով, գոնե մեկը պետք է շտապեր, հրաժարվեր կամ անհարմար զգար տեսախցիկի առաջ իր հագուստի գները բարձրաձայնելուց:

Իրականում, սակայն, բոլորը ոչ միայն սիրով համաձայնում են, այլեւ հայտնվում են հարդարված, իսկ ամենաուշագրավը՝ նրանք բոլորը հանրությանը հայտնի դեմքեր են:

Պուշկինի փողոցում իբրեւ պատահական անցորդ հայտնվածների ցանկը հիշեցնում է հայկական շոու-բիզնեսի, քաղաքական էլիտայի եւ ինֆլուենսերների շքերթ: Տեսախցիկի առաջ «պատահաբար» հայտնվածների շարքում են հանրային եւ քաղաքական ոլորտի դեմքեր, մասնավորապես, վարչապետ Նիկոլ Փաշինյանի դուստրը՝ Մարիամ Փաշինյանը, ինչպես նաեւ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

«Պատահական զբոսնողների» մեկ այլ ստվար զանգված են հեռուստատեսության եւ երաժշտական աշխարհի ներկայացուցիչները: Նրանց թվում են «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի հաղորդավար Հրաչ Մուրադյանը, հայտնի երգիչ Սարո Թովմասյանը, պրոդյուսեր եւ հաղորդավարուհի Արեւիկ Ուդումյանը, շոումեն Արամ Մելիքյանի դուստրը՝ Էլիզ Մելիքյանը: Հատկանշական է, որ նախագծում հայտնվել է նաեւ Հայաստանը «Եվրատեսիլում» ներկայացրած երգիչ ՊԱՐԳ-ի զոքանչը՝ բլոգեր Քրիստինա Շապովսկայանը:

Գործարար աշխարհից եւս հայտնի մասնագետներ չեն խուսափել Պուշկին փողոցի այս տեսախցիկից: Նրանց շարքում են բրենդինգի, մարքեթինգի եւ բիզնեսի զարգացման մասնագետ, «Braind» ստեղծագործական ընկերության եւ «Braind Marketing»-ի հիմնադիր Էդուարդ Խանկանյանը, «Big projects» ընկերության հիմնադիր Դիանա Հարոյանը, ինչպես նաեւ «Կերոն» զարգացման հիմնադրամի տնօրեն Վանանե Արարքցյանը:

Իհարկե, ցանկն ամբողջական չէր լինի առանց հենց իրենց՝ ինստագրամյան բլոգերների, որոնք, ըստ էության, փոխադարձաբար ապահովում են միմյանց դիտումներն ու ճանաչելիությունը: «Պատահական անցորդի» դերում հանդես են եկել բլոգերներ Անուշիկ Օհանյանը, Թամարա Հովհաննիսյանը, Անգելա Խաչատրյանը, ինչպես նաեւ ինստագրամում Lady Ani կեղծանունով հայտնի բլոգերը:

Փաստերը խոսում են այն մասին, որ «Yerevan Street Style» նախագիծը իրական, չպլանավորված փողոցային նորաձեւության հետ աղերսներ չունի: Երբ հայտնի մարքեթոլոգները, թաղապետերը, երգիչներն ու պաշտոնյաների զավակները միաժամանակ, նախապես հարդարված «պատահաբար» հայտնվում են նույն փողոցի նույն կետում՝ պատրաստակամորեն ցուցադրելով իրենց հագուստի արժեքը, հանրության մոտ այլեւս կասկած չի մնում՝ բլոգերային այս կոնտենտը ոչ այլ ինչ է, քան լավ բեմադրված տեսահոլովակ:

Անդրադառնալով գաղափարների գողության կամ ուրիշի կոնտենտը «քոփի անելու» մեղադրանքներին՝ հարկ է ընդգծել, որ փողոցում մարդկանց կանգնեցնելու եւ նրանց հագուստի բրենդներն ու արժեքը հարցնելու ձեւաչափը համաշխարհային թրենդ է, սակայն եթե այլ երկրներում այն իրական է եւ մարդիկ իրոք պատահական մարդիկ են, ապա ՀՀ-ի դեպքում ստացվում է ամեն ինչն է կեղծ: Ուստի ստացվում է, որ ոչ մեկը մյուսից հեղինակային գաղափար չի գողացել. սա պարզապես միջազգային հայտնի թրենդի տեղայնացում է, որը, սակայն, հայկական իրականության մեջ վերածվել է նախապես պայմանավորված շոուի:

Երեւանի սրտում նկարահանվող այս թրենդային հոլովակները վաղուց վերածվել են բացօթյա պայմանավորված տաղավարի, որտեղ «պատահականությունը» մանրակրկիտ պլանավորվում է, իսկ մասնակիցները նախապես գիտեն՝երբ, որտեղ եւ ինչ հագուստով են «անսպասելիորեն» հանդիպելու տեսախցիկին:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉՈՒ ԵՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ

Անդրեա Պիրլոյի նշանակումն Իտալիայի ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում հայտնվել է մեծ վսանգի տակ՝ վերածվելով իսկական քաղաքական սկանդալի:

Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի (FIGC) նախագահ Ջովանի Մալագոն որոշել է ժամանակավորապես կասեցնել 47-ամյա մասնագետի նշանակման գործընթացը, հայտնում է armsport-ը:

Ինչպես հաղորդում է հեղինակավոր լրագրող Ջանլուկա Դի Մարցիոն, հուլիսի 27-ին նախատեսված վճռորոշ հանդիպումները չեղարկվել են, ինչը նշանակում է, որ հուլիսի 28-ի լիգայի վեհաժողովի ժամանակ նոր գլխավոր մարզչի անվան հայտարարումը, ամենայն հավանականությամբ, տեղի չի ունենա:

Խնդիրն առաջացել է այն բանից հետո, երբ իտալացի մի շարք պատգամավորներ դեմ են արտահայտվել Պիրլոյի թեկնածությանը՝պատճառաբանելով նրա համագործակցությունը ռուսական բուքմեյքերական ընկերության հետ:

Ըստ La Gazzetta dello Sport-ի՝ Պիրլոյի եւ բուքմեյքերի միջեւ համաձայնագիրն ուղղակիորեն կապված է ԱՄԷ-ի առաջնությունում հանդես եկող «Դուբայ Յունայթեդ» ակումբում նրա աշխատանքի հետ: Պարբերականը պնդում է, որ ակումբից հեռանալուն պես կդադարի նաեւ գովազդային այդ պայմանագիրը:

Այս իրավիճակը կարող է հանգեցնել նաեւ դոմինոյի էֆեկտի: Եթե Պիրլոյի փոխարեն նշանակվի մեկ այլ մարզիչ, որը չի համապատասխանում Իտալիայի հավաքականի տեխնիկական տնօրեն Պաոլո Մալդինիի եւ նրա խորհրդական Լեոնարդոյի նախագծին, ապա վերջիններս կարող են ժամկետից շուտ հրաժարական տալ:

Իտալական ֆուտբոլի լեգենդը որոշել է չլռել եւ հանդես է եկել ծավալուն հայտարարությամբ՝ պարզաբանելով ստեղծված իրավիճակը.

«Վերջին օրերին մեծ ափսոսանքով էի հետեւում այն բանավեճին, որը ծավալվել էր իմ անվան եւ Իտալիայի հավաքականը գլխավորելու հնարավորության շուրջ: Հարգելով ինստիտուտները, ֆեդերացիան եւ բոլոր ներգրավված անձանց՝ ես մինչ այժմ նախընտրում էի լռել: Սակայն այժմ հարկ եմ համարում պարզաբանել որոշ հարցեր:

Իմ ողջ կարիերայի ընթացքում՝նախ որպես ֆուտբոլիստ, իսկ այժմ որպես մարզիչ, ես միշտ գործել եմ այն երկրների օրենքներին եւ իմ կնքած պայմանագրերի կետերին լիովին համապատասխան: Այն մասնագիտական համագործակցությունը, որը դարձել է վերջին վեճերի առարկա, ծագել է Արաբական Միացյալ Էմիրություններում իմ աշխատանքային գործունեության շրջանակներում եւ կրում է բացառապես առեւտրային եւ սպորտային բնույթ: Այդ համագործակցությանը քաղաքական երանգ տալը նշանակում է ինձ վերագրել համոզմունքներ, որոնք ես երբեք չեմ արտահայտել եւ որոնք ինձ բնորոշ չեն:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Մալդինիին եւ Լեոնարդոյին ինձ վստահելու եւ հարգելու համար: Ես գիտեմ նրանց պրոֆեսիոնալիզմը, լրջությունը եւ այն սերը, որ նրանք միշտ տածել են իտալական ֆուտբոլի հանդեպ:

Շատ ցավալի է, որ մաքուր սպորտային որոշումն արագորեն ներքաշվեց հանրային քննարկումների դաշտ, որի արդյունքում իմ անձին վերագրվեցին մտադրություններ ու իմաստներ, որոնք ինձ հետ որեւէ աղերս չունեն:

Սերը Իտալիայի հանդեպ կախված չէ պաշտոնից: Այն իմ պատմության, իմ ինքնության անբաժան մասն է եւ կուղեկցի ինձ միշտ»,- գրել է Պիրլոն:

Հիշեցնենք, որ 47-ամյա մասնագետը «Դուբայ Յունայթեդը» գլխավորում է 2025 թվականի հուլիսից: Նրա գործող պայմանագիրն ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2027 թվականի հունիսի 30-ը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԵՏՔ Է ՁԵՌՔ ԲԵՐԻ

«Մանչեսթեր Յունայթեդի» նախկին ֆուտբոլիստ Ռոյ Քինն ասել է, որ անգլիական գրանդը պետք է փորձի ձեռք բերել «Մայնցի» ու Ճապոնիայի հավաքականի ֆուտբոլիստ Կաիշու Սանոյին, որի ծառայություններով այժմ հետաքրքրված է «Լիվերպուլը», գրում է armsport-ը: Նշենք, որ հավանական տրանսֆերի արժեքը գնահատվում է 50-60 մլն եվրո: «Մանչեսթեր Յունայթեդը» պետք է պայմանագիր կնքի Կաիշու Սանոյի հետ, նա հենց այն ֆուտբոլիստն է, որը մեզ անհրաժեշտ է: «Մանչեսթեր Յունայթեդը» պետք է լրջորեն դիտարկի Սանոյին: Մարդիկ չպետք է մոռանան, թե ինչ ցուցադրեցին ճապոնացի ֆուտբոլիստները Աշխարհի առաջնությունում. նրանք իրենց կարգապահությամբ, էներգիայով եւ մարտավարական հմտությամբ իրական խնդիրներ ստեղծեցին ամենամեծ ֆուտբոլային թիմերից մի քանիսի համար: Սանոն ընդամենը 25 տարեկան է, բայց նրա պաշտպանական բնազդները բարձրակարգ են: Նա լավ է կարդում խաղը, չորս պաշտպանները նրա թիկունքում ավելի վստահ են գործում, հաղթում է մենապայքարներում եւ պահպանում է պարզությունը, երբ դա ամենակարեւորն է: Բոլորը խոսում են մեծ անունների վրա մեծ գումարներ ծախսելու մասին, բայց երբեմն լավագույն տրանսֆերներն աննկատ են մնում հեղինակավոր անունների ֆոնին: Նա հենց այն ֆուտբոլիստն է, որը պակասում էր «Յունայթեդին»: Ես չեմ կարծում, որ նա կարժենա 30 միլիոն ֆունտից ավելի, չնայած գինը, հավանաբար, կբարձրանա, եթե ակումբը թակի դուռը: Նույնիսկ այդ դեպքում ես դեռ կընտրեի նրան: Նրա ելույթները Աշխարհի առաջնությունում համոզեցին ինձ, որ նա ընդունակ է հաղթահարելու ամենամեծ բեմերը: Տաղանդը, աշխատանքային էթիկան եւ ֆուտբոլային ինտելեկտը պետք է լինեն հեղինակությունից վեր: Մանչեսթեր Յունայթեդին անհրաժեշտ են ֆուտբոլիստներ, որոնք կբարելավեն թիմը, այլ ոչ թե միայն անունը կլինի: Սանոն այն ֆուտբոլիստներից է, ում ես կընտրեի»,- ասել է Քինը փոդքասթի ժամանակ:

ՆՈՐ ՏՐԱՆՍՖԵՐ

«Ռեալ Մադրիդը» Դիոմանդեի տրանսֆերը ձեռք կբերի 115-120 միլիոն եվրոյի դիմաց, armsport-ի փոխանցմամբ՝ հայտնում է As-ը: «Ռեալ Մադրիդը» արդեն վաղը կարող է հայտարարել Յան Դիոմանդեի տրանսֆերի մասին: Նախկինում հաղորդվել էր, որ մադրիդյան ակումբը սկզբունքային համաձայնության է եկել «ՌԲ Լայպցիգի» հետ 19-ամյա վինգերի տրանսֆերի վերաբերյալ: As-ի տվյալներով՝«Ռեալ Մադրիդը» Դիոմանդեի համար կվճարի 115-120 միլիոն եվրո: Բեն Ջեյքոբսը նշում էր 90 մլն եվրոյի մասին: Գործարքը, ինչպես սպասվում է, կկնքվի առաջիկա ժամերին, իսկ տրանսֆերի պաշտոնական հայտարարությունը հնարավոր է արդեն երկուշաբթի օրը: Հաղորդվում է, որ Դիոմանդեին ներկայացնում է նույն գործակալությունը, որը զբաղվում է «Ռեալ Մադրիդի» հարձակվող Վինիսիուս Ժունիորի ծառայություններով, ինչը թույլ է տվել ակումբին արագ համաձայնության գալ կոտդիվուարցու գործակալների հետ:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում օգոստոսի 2-ին՝ժամը 12:00-ին, կկայանա «Անհաղթ աքլորը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե որոնք են պրոբացիայի նպատակները:

Գեղամ Սիրունյան, 52 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Պրոբացիայի նպատակներն են՝

քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով.

հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի եւ հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաեւ նրա ֆիզիկական եւ հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը եւ այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը.

հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման եւ կրճատման միջոցով.

պրոբացիայի շահառուին եւ տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելը.

քրեական արդարադատության իրականացման աջակցությունը:

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է որոշվում երեխայի քաղաքացիությունը:

Սահակ Գասպարյան, 67 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ է, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե՝

նա ծնվել է ՀՀ-ում, կամ

ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ

ծնողները մշտապես բնակվում են ՀՀ-ում:

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Համաճարակի վտանգ Երեւանի կենտրոնում. դիտահորից դուրս թափվող կեղտաջրերը լցվում են մարդկանց տան նկուղներ եւ բակեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____

Ազգանուն՝ _____

Առաքման հասցե՝ _____

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 10 + 15	+ 26 + 30
Կոտայքի լեռներ	+ 10 + 14	+ 26 + 29
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21	+ 32 + 35
Գեղարքունիք	+ 11 + 16	+ 26 + 29
Լոռի	+ 11 + 16	+ 25 + 28
Տավուշ	+ 12 + 16	+ 26 + 28
Արագածոտնի լեռներ	+ 10 + 14	+ 26 + 29
Արագածոտնի նախալեռներ	+ 16 + 21	+ 31 + 36

Արարատ	+ 18 + 22	+ 35 + 37
Արմավիր	+ 18 + 22	+ 35 + 38
Վայոց ձորի լեռներ	+ 11 + 15	+ 26 + 29
Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 22	+ 36 + 39
Սյունիքի լեռներ	+ 11 + 14	+ 20 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 17	+ 26 + 29
Սյունիքի հովիտներ	+ 19 + 23	+ 32 + 35
Երեւան	+ 20 + 22	+ 35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*